

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԱԹՈՍ ԼԵՐԱՆ ՎԱՆՔԵՐԸ.

Ի նկատի ունենալով այն ազմկալի դէպքերը, որոնք վերջերս տեղի ունեցան Աթոս լեռան վանքերի մէջ, և այդ դէպքերն աւելի հասկանալի դարձնելու համար հարկաւոր ենք համարում «Արա-րատ»-ի ընթերցողներին ծանօթացնել այդ վանքերի համառօտ պատ-մութեան, նկարագրի և կենցաղի հետ:

Էգէջեան ծովի մէջ հիւսիսային կողմից երեք նեղ ու երկար թերակղզիներ են մտնում, որոնցից արեւելեան թերակղզու վրայ ձգւում են մասսիւ լեռների մի քանի շարքեր, թերակղզին ծած-կուած է ամբողջապէս անտառներով, ունի վերին աստիճանի գե-ղատեսիլ վայրեր: Ամենագեղեցիկ և ամենարազմազան հինաւուրց-ծառերը զարդ են կազմում այդ լեռների մենութեան մէջ: Խաղողի որթը, ձիթենին ու միւս պտղատու ծառերը ծածկում են լաւ հո-վանաւորուած հովիտները, որոնք երբեմն զարմանալի նկարուն կերպով կտրատւում են նեղ քարափներով, անձուկ կրճերով և ժայռերի կոյտերով: Ու բնութեան այդ փոքրիկ անկիւնը հանդէս է բերում տեսարանների ու պատկերների այնպիսի մի բազմազա-նութիւն, դոյների և երանգների այնպիսի մի պերճութիւն, որի նմանը չառ քիչ է պատահում:

Ահա այս գեղեցկանիւտ սարերի ու անտառապատ վայրերի մէջ չինուած են Աթոսի վանքերը:

Աթոս անունը (Αθον, Athos) հին յունական է և ծագում է Աթոս հսկայից, որը, ինչպէս յունական աւանդութիւնը պատմում է, աստուածների հետ կռուելիս բարկացած այդ կողմերն է նետել Աթոս լեռը: Թեսսալիայից: Աթոս լեռը սրբավայր էր դեռ նախա-քրիստոնէական ժամանակներում: Լեռան ամենաբարձր կատարի վրայ չինուած էր Թրակիական Զեսի հսկայական արձանը, որը ղէպի իրան էր քաշում ուխտաւորների և ճանապարհորդների եր-կար շարքերը, իսկ մի փոքր ներքեւ, ծովի ափին կառուցուած տա-ճարի մէջ ամեն տարի մեծամեծ տօնակատարութիւններ էին տեղի ունենում ի պատիւ յունական բոլոր աստուածների:

Միայն 9-րդ դարումն է, երբ քրիստոնէական անապատական-ներն ու ճգնաւորները երևում են Աթոս լեռան շրջակայքում. 880 թուին նրանք չինում են մի քանի վանքեր և Աթոս լեռը իրանց բացառիկ սեփականութիւնն են յայտարարում: Մի դար շարունակ

կարողանում են այդ առաջին ճգնաւորները դիմանալ արարների և սարակինոսների յաճախակի յարձակումներին, մինչև որ վանականները կեանքը աւելի կանոնաւորուեմ, հաստատուն է դառնում։ Վանական գաղութի իսկական հիմնադիրը իրօք լինում է Աթանաս վանականը, որը կառուցանում է մի օրինակելի մենաստան և վանական կեանքը կարգ ու կանոնի տակ է դնում։ Բիւզանդական վանական կարգերը—ձեռքի աշխատանք և աղօթք, ընդհանուր սեղան և խոտագոյն հպատակութիւն վանահօր հրամաններին—դառնում են շուտով ղեկավարող նաև Աթոսի լերան համար։ Աօղա կոստանդին Մոնոմախի ժամանակ (1042—54) հետզհետէ առաջ են գալիս նաև ուրիշ վանքեր, շինւում են 180 անջատ անջատ խցեր 700 վանականների համար։ Ու այսպիսով կամաց կամաց առաջանում է վանքերի այն հոյակապ շարքը, որ տեսնողին դարմանք և հիացմունք է պատճառում։ Եթէ թուրքերը Պոլիսն առան և այդպիսով վերջ տուին Բիւզանդական կայսրութեանը (1453), Աթոսը նոր Երուսաղէմ դարձաւ ուղղափառ սլաւոնների, ռումինների և յոյների համար։ Այն մեծ հարստութիւնը, որ Աթոսի վանքերն այժմ ունին, մեծ մասամբ զոյացել է Դանուբեան երկիրներից և Ռուսաստանից թափւող նուիրատւութիւններից։ Դեռ 11-րդ դարից յիշատակութիւններ կան, որ ուսնները սերտ յարաբերութեան մէջ են եղել Աթոս լերան վանքերի հետ։ Աթոսի վանքերի պատերին դրուած բազմաթիւ ռուս անուններն ու մենագրութիւնները պերճաբոս վկայութիւններ են այդ մասին։ Շուտով Աթոսի վանական գաղութն եւ զգուժ է, թէ ինչ հարուստ հող է ներկայացնում Ռուսաստանը ժողովարարութեան համար և սովորական է դարձնում իւր համար պարբերաբար պատուիրակութիւններ ուղարկել զանազան երկիրներ և յատկապէս Ռուսաստան, որ հսկայական գումարներ են հաւաքում։ Ինչպէս պաշտօնական քննութիւնները ցոյց են տուել, այդ գումարները յաճախ իրանց իսկական նպատակին չեն ծառայում, այլ այս կամ այն անհատի մասնաւոր շահագործութեան առարկայ դառնում, ուստի և ռուսական սինոդի կողմից վերջին ժամանակներս այնքան էլ բարեացակամ վերաբերմունքի չեն արժանանում։

Այժմ Աթոս լերան վանքերն հետեւեալ դրութեան մէջ են։ Այնտեղ կան 21 մեծ վանք, 11 ապաստանարան, 250 առանձնակի խուցեր և 150 մեծ բնակավայրեր։ Այսպիսով վանական մի ամբողջ հասարակապետութիւն։ Արեւելեան ուղղափառ եկեղեցուն պատկանող իւրաքանչիւր աղգութիւն ունի այնտեղ իւր մի կամ մի քանի վանքերը, ուր ամենայն տարի հազարաւոր ուխտաւորներ են գալիս Ռուսաստանից, Սերբիայից, Բուլղարիայից, Յունաստանից և ֆոքր Ասիայից։ Այդտեղի վանականները պատկանում են զանազան աղ-

գութիւնների, բայց մեծ մասամբ յոյն և ռուս են: Բոլոր վանականներն ապրում են Բարսեղ Մեծի կանոններով—միանգամայն կտրուած աշխարհից: Վանականները թւով մօտ 6000 են: Դեռ նախքան Օսմանցիների Պոլիսն առնելը, Աթոսի վանականները կամաւոր կերպով հպատակուում են սուլթան Մուրատ II-ին, որի համար սուլթանը նրանց խոստանում է նրանց կրօնական զգացմունքները չվիրաւորելու համար թոյլ չտալ ոչ մի մահմեդականի—քնակութիւն հաստատել այդ վայրերում:

Վանականների այդ հոկայական բազմութիւնը կառավարւում է սինոդի միջոցով, որի բնակավայրն է թերակղզու կենտրոնում ձգուած Կարէշը: Սինոդի անդամներն են՝ իւրաքանչիւր հնագոյն վանքից բնորոշւած մի անդամ (20 հոգի), ապա մնացած չորս վանքերի վանահայրերը: Սինոդի հաւաքումները շարաթական են. նրա պարտականութիւնն է հոգ տանել վանքերի կարգապահութեան, ստացուածքի կառավարութեան և սուլթանին հասանելիք հարկի ճշտապահ հատուցման վրայ:

Ներքին կազմակերպութեան և կառավարութեան տեսակէտից վանքերը հնուց ի վեր խիստ տարբերութիւններ են հանդէս բերել: Վանքերից մի քանիսը կառավարւում են վանահայրերով ունին միապետական կազմ, հանրակեաց կենցաղ ունեն. միւսները աչքի են ընկնում իրանց հասարակապետական կառավարութեամբ: Երկրորդ կարգի վանքերի մէջ վանականներն ապրում են, ինչպէս ուզում են, վանքից ստանում են միայն հաց և գինի: Բոլոր տիպի վանքերի մէջ թաղաւորում է խոտագոյն կեանքը. կինը մուտք չունի նրբէք Աթոսի վանքերի մէջ: Բացի վանքերից, ինչպէս ասացինք, Աթոսի վրայ կան նաև բազմաթիւ ապաստարաններ, որոնք ներկայացնում են տնակների մի ամբողջ խումբ. թւով 60, որոնցից իւրաքանչիւրի մէջ ապրում են 4—5 վանականներ—չատ աւելի խիստ և դաժան կեանքով, քան միւս վանքերի վանականները:

Աթոս լեռան վանքերում գիտութիւնը այնքան էլ չի ծաղկում. ճիշտ է, միջին դարում այս վանքերը յունական գիտութիւնների և եկեղեցական արուեստի անկարաններ էին, բայց այժմ աստուածաբանական գիտութիւնների մէջ Աթոսի վանականները շատ աննշան տեղ են բռնում: Բայց մի ուրիշ հանդամանք շատ բարձրացնում է այս վանքերի նշանակութիւնը: Աթոսի վանքերում գեթեղուած է ձեռագիր մատենաների և վաւերաթղթերի, յիշատակարանների ամենահարուստ մատենադարաններից մէկը. վանական գրագարանի ձեռագիրների թիւը հաշւում են մինչև 13,000, թանկագին գանձ է սուրբ հայրերի և եկեղեցական նշանաւոր հեղինակների ինքնագիր ձեռագիրները. աւելի թանգագին են պատմութեան և հնախօսութեան համար այն յիշատակարանները, որոնք պահուած են յունական և քալդէոյ ազգերի ձեռագրերի մէջ և միջնադարեան եկեղեցական արուեստի անգին գոհարներ են:

Այս է ահա Աթոս լեռան վանքերի անցեալն ու ներկան. հետեւալ անգամ մենք կըտանք համառօտ նկարագիրը այն անցքերի և դէպքերի, որոնք տեղի ունեցան այս քանի օրերս այնտեղ և յուզեցին ռուսական մտքերը ու մինչև այժմ յուզում են: